Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Շրջաններով քայլելը

Դուք երբևէ լսե՞լ եք հին ասացվածքը, որ մարդիկ, ովքեր մոլորվում են, հակված են քայլել շրջաններով:

Գերմանացի հոգեբան Ջան Լ. Սոումանը ցանկացավ գիտականորեն սահմանել, թե արդյոք սա ճիշտ է: Նա գիտափորձի մասնակիցներին տարավ մի մեծ անտառ և Սահարայի անապատ և նրանց հետևելու համար օգտագործեց մի ընդհանուր համակարգ, որ տեսներ, թե ուր էին նրանք գնում: Նրանք չունեին կողմնացույց կամ որևէ այլ սարք: Նրանց տրվել էին պարզ հրահանգներ՝ նշված ուղղությամբ քայլել ուղիղ գծով:

Դոկտոր Սոումանը ավելի ուշ նկարագրում է պատահածը. «Նրանցից [ոմանք] քայլում էին ամպամած օրերին, երբ արևը թաքնված էր ամպերի ետևում [և երբ տեսադաշտում չկային տեղեկատու նշաններ]: . . . [Նրանք] բոլորն էլ քայլում էին շրջաններով: Նրանցից [ոմանք] բազմիցս անցնում էին իրենց նույն ճանապարհով՝ առանց դա նկատելու»: Այլ մասնակիցներ քայլում էին մինչդեռ շողում էր արևը և հեռվում երևում էին տեղեկատու նշանները: «Նրանք . . . հետևում էին գրեթե կատարելապես ուղիղ ճանապարհին»:[1]

Այս ուսումնասիրությունը կրկնվել է ուրիշների կողմից՝ տարբեր մեթոդաբանություններով:[2] Բոլորն էլ հանգել են նմանատիպ արդյունքների:

Առանց տեսանելի ուղենիշերի մարդկային արարածները հակված են քայլել շրջաններով:

Սուրբ գրությունների ուղենիշը

Առանց հոգևոր ուղենիշերի մարդկությունը ճամփորդում է նման ձևով: Առանց Աստծո խոսքի մենք քայլում ենք շրջաններով:

Որպես անհատներ և հասարակություն մենք կրկին և կրկին տեսնում ենք այս օրինակի կրկնությունը յուրաքանչյուր տնտեսությունում՝ ի սկզբանե: Երբ մենք տեսադաշտից կորցնում ենք Աստծո խոսքը, մենք հակված ենք մոլորվելու:

Անկասկած սա էր պատճառը, որ Տերը պատվիրեց Լեքիին իր որդիներին ետ ուղարկել Երուսաղեմ արույրե թիթեղները բերելու համար: Աստված գիտեր, որ Լեքիի սերունդները կունենային հուսալի ուղենիշերի կարիք՝ տեղեկատու նշանների, որոնք առաջնորդություն կապահովեին նրանց, որոնք նրանք կարող էին օգտագործել որոշելու համար, թե արդյոք գտնվում էին ճիշտ ճանապարհի վրա:

Սուրբ գրությունները Աստծո խոսքն են: Դրանք Աստծո ուղենիշերն են, որոնք ցույց են տալիս ուղին, որով մենք պետք է ճամփորդենք, որպեսզի կարողանանք ավելի մոտենալ մեր Փրկչին և հասնել արժանի նպատակներին:

Գերագույն համաժողովի ուղենիշերը

Գերագույն համաժողովի ժամանակ տրված հրահանգները մեկ այլ ուղենիշ են, որ կարող են մեզ օգնել իմանալ, թե արդյոք մենք ճիշտ ճանապարհի վրա ենք:

Երբեմն ես հարցնում եմ ինքս ինձ. «Ես լսե՞լ եմ խոսքերը, որոնք տրվել են տղամարդկանց և կանանց կողմից, ովքեր խոսել են Եկեղեցու վերջին գերագույն համաժողովի ժամանակ: Արդյո՞ք ես ընթերցել և վերընթերցել եմ նրանց խոսքերը: Ես խորհե՞լ եմ դրանց շուրջ և կիրառե՞լ եմ դրանք իմ կյանքում: Թե՞ ես պարզապես վայելել եմ լավ ելույթները և կարևորություն չեմ տվել ոգեշնչված ուղերձներն իմ անձնական կյանքում կիրառելուն»:

Միգուցե, մինչ դուք լսում կամ կարդում էիք, դուք արագ կատարել եք մեկ կամ երկու նշումներ: Հավանաբար դուք խոստացել եք որևէ բան ավելի լավ կամ այլ կերպ անել: Պարզապես մտածեք վերջին գերագույն համաժողովի ուղերձների մասին: Շատերը խրախուսեցին մեզ ամրացնել մեր ընտանիքները և կատարելագործել մեր ամուսնությունները: *Լիահոնան* նույնպես կենտրոնանում է այս հավերժական արժեքների վրա՝ տալով բազմաթիվ գործնական խորհուրդներ մեր կյանքն օրինելու համար:

Արդյո՞ք մենք նկատում և կիրառում ենք այս արժեքավոր խորհուրդը: Արդյո՞ք մենք ճանաչում և զնում ենք այս իրական և արժեքավոր ուղենիշերի ուղղությամբ:

Թափառելու հակաթույնը

Հոգևոր ուղենիշերը անհրաժեշտ են նեղ ու անձուկ արահետում մեզ պահելու համար: Դրանք տալիս են պարզ առաջնորդություն, թե որ ճանապարհով մենք պետք է գնանք, բայց միայն այն դեպքում, երբ մենք նկատում ենք դրանք և քայլում ենք դրանց ուղղությամբ:

Եթե մենք հրաժարվում ենք առաջնորդվել այս ուղենիշերով, դրանք դառնում են անիմաստ, դեկորատիվ ուղերձներ, որոնք չունեն նպատակ, բացի միայն հորիզոնի միապաղաղությունը ցրելու:

Բավական չէ զուտ մեր ներքին զգացողություններին հետևելը:

Բավական չէ լավագույն նպատակներ ունենալը:

Չի կարելի հույսը դնել միայն մեր բնազդների վրա:

Նույնիսկ երբ մենք կարծում ենք, թե հետևում ենք հոգևոր նեղ արահետին, առանց մեզ առաջնորդելու համար ճշմարիտ ուղենիշերի, առանց Հոգու առաջնորդության մենք հակված կլինենք թափառելու:

Ուստի, եկեք բացենք մեր աչքերը և տեսնենք ուղենիշերը, որ մեր մեծահոգի Աստվածը նախապատրաստել է Իր զավակների համար: Եկեք կարդանք, լսենք և կիրառենք Աստծո խոսքը: Եկեք աղոթենք անկեղծ միտումով և լսենք ու հետևենք Հոգու ոգեշնչումներին: Հենց որ մենք տեսնենք աստվածային ուղենիշերը, որոնք առաջարկվում են մեր սիրելի Երկնային Հոր կողմից, մենք պետք է ընթանանք այդ ուղղությամբ: Մենք պետք է նաև պարբերաբար ուղղենք մեր ընթացքը, երբ մենք կենտրոնանում ենք հոգևոր ուղենիշերի վրա:

Այսպիսով, մենք չենք թափառի շրջաններով, այլ կքայլենք վստահաբար և համոզվածությամբ դեպի այդ հրաշալի երկնային օրհնությունը, որը նախատեսված է նրանց համար, ովքեր քայլում են Քրիստոսի աշակերտության նեղ ու անձուկ արահետով:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Jan L. Souman and others, “Walking Straight into Circles,” *Current Biology* vol. 19 (Sept. 29, 2009), 1538:
2. Տես, օրինակ, Ռոբերտ Կռուլվիչ, “A Mystery: Why Can’t We Walk Straight?” npr.org/blogs/krulwich/2011/06/01/131050832/a-mystery-why-can-t-we-walk-straight.

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Երբ դուք նախապատրաստվեք ուսուցանել այս ուղերձից, դուք կարող եք սուրբ գրություններում փնտրել մարդկանց օրինակներ, ովքեր առաջնորդվել են հոգևոր ուղենիշերով, կամ ովքեր շարունակ թափառել են: Դուք կարող եք սկսել ձեր ուսումնասիրությունն այս սուրբ գրություններից. Թվոց ԺԴ.26–33, 1 Նեփի 16.28–29, Ալմա 37.38–47: Եթե դուք ոգեշնչում զգաք, կարող եք մտքեր կիսել այս օրինակներից նրանց հետ, ում դուք ուսուցանում եք: Հարցրեք նրանց, թե ինչ կարող ենք սովորել այս պատմություններից:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Ուղենիշեր ձեզ համար

Նախագահ Ուխդորֆը նկարագրում է գերագույն համաժողովը և սուրբ գրությունները որպես ուղենիշեր, որոնք օգնում են մեզ խուսափել հոգևոր թափառումներից: Խորհեք այլ հոգևոր ուղենիշերի մասին, որոնք ազդեցություն են ունեցել ձեր կյանքի վրա և առաջնորդել են այն: Գրեք ձեր օրինակները ձեր օրագրերում: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնից հետևյալ մեջբերումները կարող են օգնել ձեզ.

«Ձեր հայրապետական օրհնությունը կառաջնորդի ձեզ մութ գիշերը: Այն կուղեկցի ձեզ կյանքի

դժվարությունների ժամանակ: . . . Ձեր օրհնությունը չպետք է ծալվի ու մի կողմ դրվի: Այն չպետք է շրջանակի մեջ առնվի կամ հրապարակվի: Այլ այն պետք է կարդացվի: Այն պետք է սիրվի: Դրան պետք է հետևել»:

"Your Patriarchal Blessing: A Liahona of Light," *Ensign,* Nov. 1986, 66.

«Մեր Երկնային Հայրը մեր հավերժական ճամփորդության մեջ մեզ չի թողել առանց միջոցներ տրամադրելու, որոնցով մենք կարող ենք Նրա առաջնորդությունը ստանալ՝ անվտանգ ետ վերադառնալու համար: Ես խոսում եմ աղոթքի մասին: Ես նաև խոսում եմ այդ մեղմ, հանդարտ ձայնի հուշումների մասին»:

«Կյանքի մրցավազք», *Լիահոնա,* մայիս 2012, 90:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ես կարող եմ գտնել իմ ուղին

Նախագահ Ուխդորֆն ասում է, որ մենք պետք է հետևենք հոգևոր ուղենիշերին, քանի որ դրանք կօգնեն մեզ ընտրել ճիշտը և ավելի մոտենալ Փրկչին: Այս ուղենիշերից են՝ աղոթքը, սուրբ գրությունները, գերագույն համաժողովը և *Լիահոնան:*

Ձեր ընտանիքի հետ կարդացեք մի ելույթ վերջին գերագույն համաժողովից: Ի՞նչ է խորհուրդ տալիս մեզ խոսնակն անել, որ մենք մնանք ճիշտ ուղու վրա: Ձեր ընտանիքով նպատակներ դրեք, որ կիրառեք այն, ինչ սովորել եք:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/12: Թարգմանության հաստատումը. 6/12: *First Presidency Message, June 2013*-ի թարգմանությունը Armenian. 10666 201

Ուրախություն գտնել ընտանեկան պատմության աշխատանքում

Ուսումնասիրեք այս նյութն աղոթքով և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ Եղիայի Հոգին «Սուրբ Հոգու դրսևորումն է, որ վկայում է ընտանիքի աստվածային էության մասին»:[1]

Որպես Քրիստոսի վերականգնված Եկեղեցու անդամներ, մենք ուխտի միջոցով պարտավորվել ենք փնտրել մեր նախնիներին և կատարել նրանց համար ավետարանի փրկարար արարողությունները: Նրանք առանց մեզ չեն կարող «կատարյալ դառնալ» (Եբրայեցիս ԺԱ.40), և «ոչ էլ մենք կարող ենք կատարյալ դառնալ առանց մեր մահացածների» (ՎևՈՒ 128.15):

Ընտանեկան պատմության աշխատանքը նախապատրաստում է մեզ հավերժական կյանքի օրհնությունների համար և օգնում է մեզ զարգացնել մեր հավատքը և անձնական արդարակեցությունը: Ընտանեկան պատմությունը Եկեղեցու առաքելության էական մասն է կազմում և հնարավոր է դարձնում փրկության աշխատանքը և վեհացումը բոլորի համար:

Նախագահ Բոյդ Ք. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Նախագահը, ասել է. «Երբ մենք ուսումնասիրում ենք մեր սեփական տոհմածառը, մեզ սկսում է հետաքրքրել ավելին, քան անունները: . . . Մեր հետաքրքրասիրությունը մեր սրտերը դարձնում է դեպի մեր հայրերը, մենք փորձում ենք գտնել նրանց և ճանաչել նրանց և ծառայել նրանց»:[2]

Սուրբ գրություններից

Մաղաքիա Դ.5–6, Ա Կորնթացիս ԺԵ.29, ՎևՈՒ 124.28–36, 128.15

Մեր պատմությունից

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Ամենամեծ պատասխանատվությունն այս աշխարհում, որ Աստված դրել է մեզ վրա, մեր մահացածներին փնտրելն է»:[3] Մենք կարող ենք տաճարում ծառայել որպես փոխարինող մեր մահացած նախնիների համար և նրանց համար կատարել անհրաժեշտ արարողություններ:

Շելլի Ռենդալը Նավույից, Իլլինոյս, ում 14-ամյա որդին մահացավ, մեծ մխիթարություն գտավ հավերժական ընտանիքների խոստման մեջ: Այն բանից հետո, երբ նրա ամուսինը մկրտվեց իրենց որդու համար, նա գրեց իր բարեկամներին. «Ինչ փառահեղ բան է, որ մենք կարող ենք մկրտվել մեր բոլոր մահացածների [նախնիների] համար և փրկել նրանց, որքան շատ որ կկարողանանք տեղեկություններ գտնել նրանց մասին»: Ապա նա խնդրեց իր բարեկամներին տեղեկություններ ուղարկել իրեն իրենց նախնիների վերաբերյալ, ասելով. «Ես նպատակ եմ դրել անել այն ամենը, ինչ կարող եմ, որ փրկեմ [մեր ընտանիքը]»:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Russell M. Nelson, "A New Harvest Time," *Liahona,* July 1998, 34.
2. Boyd K. Packer, "Your Family History: Getting Started," *Liahona,* Nov. 2011, 17.
3. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 475.
4. Տես *Իմ արքայության դուռտրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 20–21:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս ես կարող եմ օգնել քույրերին, որոնց ես այցելում եմ, կատարել ընտանեկան պատմության աշխատանք:

2. Ես գրո՞ւմ եմ իմ անձնական պատմությունը:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/12: Թարգմանության հաստատումը. 6/12: *Visiting Teaching Message, June 2013*-ի թարգմանությունը Armenian. 10666 201